թեան մեծի Տէրութեանդ և թանգագին Վեհափառի հօրդ հասարակաց։

Եւ ես նուաստ սպասաւորս Սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց աղօթս ջերմագինս յաթոռ բարձրելոյն վերառաքեմ վասն յարատև բարեբաստիկ թագաւորութեան և արքունութեան Վեհափառ Շահն–Շահիդ, որոյ մեամ ջերմեռանդն աղօթարար։

Տեղակալ կաթուղիկոսի ամենայն Հայոց
ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

19-ն յունուարի 1908 ամի
Ի Ս. Էջմիածին։

Սոյ Ս. Կաթուղիկոսը Տ. Սահակ Բ. յատուկ կոնկոնդակով, ուղղուած Ամենապատիւ Տ. Տեղակալին, իւր ցաւակցութիւնն է յայտնում ընդհանրական Հայրապետի մահուան առթիւ։ Ս. Տեղակալի հաճութեամբ հրատարակում ենք այդ դրութիւնն ամբողջապէս, որովհետև յայտարար է այն բարեկամական յարաբերութեան, որ ստեղծուած է Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսի ընտրութիւնից ի վեր։ Մեր ընթերցողներին յայտնի է, որ երկար ժամանակ գժտութիւն կար երկու աթոռների մէջ Գէորգ Դ. ընդհանրական կաթուղիկոսի և Կիլիկիոյ Մկրտիչ կաթուղիկոսի օրով։ Թէպէտ հանգուցեալ Մակար կաթուղիկոսի ժամանակ արդէն վերացած էր պաշտօնապէս գժտութիւնը, բայց Տ. Սահակ Բ. աւելի ևս սիրալիր յարաբերութիւն ակսեց, հէնց առաջին պատարագի մէջ յիշելով ընդհանրական Հայրապետի անունը։

ՍԱՀԱԿ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց տանն Կիլիկիոյ: Ամենապատիւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեանց, Տեղակալի ընդհ. Հայրա-

պետութեան համազգական Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի, ողջոյն եղբայրական սիրոյ հանդերձ ջերմագին մաղթանք վասն յարատեւութեան եւ պայծառութեան Աթոռոյդ եւ Հայրապետութեան եւ Նորին ուխտանուէր եւ սրբակենցաղ միաբանութեան:

Զդառնակսկիծ բօթ մահուան Առաքելաշնորհ Հայրապետին լուաք ի հեռագրական յայտարարութենէն Առաջնորդարանի Ատանայի, մինչ էաքն ի Հիւսնու-Մանսուր, ի վիճակին Մելիտինոյ և կարեվէր խոցեցաք։ Ի պատճառս թեմական այցելութեան տարակայութիւն մեր յԱթոռէ եղև պատճառ յապաղման վշտակցական գրութեան մերոյ, թէպէտ և անդէն իսկ ի լսել մեր զանակնկալ և զտխրաբիթ գոյժ մահուանն Հայրիկին հանուրց Հայաստանեայց, հեռագրական ծանուցմամբ զեկուցաք թեմականին Ատանայի, հաղորդել Ձերումդ Սրբազնութեան և Գեր. անդամոց Սինոդիդ, ըստ հաւատոյ խորին ոգոյն և վշտին Մերոյ, այլ ի խստութենէ եղանակին ձմերայնոյ ի տեղիս տեղիս խանգարմունք հեռագրական թելից, որպէս ապա հասու դառաք իրացն, չ'ետուն թոյլ կատարել զայդ պարտիս ի պատեհ ժամուն և որով զրկեցաք յսփոփանացն, նշանակելոյ ի Մերմէ կուսէ պատգամաւոր ոմն յաւուր օծմանն և յուղարկաւորութեան Ծնորհազարդ Հայրապետի։

Ի հանգիստ հոգւոյ երանելւոյ Հայրապետին և ի մխիթարութիւն վշտազգեաց ժողովրդեան հրամայեցաք համօրէն առաջնորդաց և փոխանորդաց մերոյ յեկեղեցիս Կիլիկիոյ պաշտօն հոգեհանդստեան կատարել և ի Հիւսնու-Մանսուր ընդ մերով նախագահութեամբ կատարեցաք նոյն կարգ պաշտաման։

Կոծ և կսկիծ անակնկալ մահուան ոչ միայն համակեցին զմիաբանութիւն Սրբոյ Աթոռոյն և զժողովուրդն վիճակաց Էջմիածնի, այլ զհամօրէն ուխտ եկեղեցւոյ, որ ի սփիւռս աշխարհի և ի Կիլիկիա, զի յօրմէ յայնմանէ մերոյս ընտրութեան ի կաթողիկոսութիւն իղձք մեր և տարփանք սրտի եղեն բանիւ և արդեամբ քարոզել զվիւութիւն եկեղեցւոյ, դաւանութեան, ծիսից և համարիւն

ժողովրդեան. վասն որոյ որչափ Դուք, նոյնչափ և առաւել ևս մեք համակեցաք ի սուգ. զի Հայրն հանուրց, մեծ ջատագովն խաղաղութեան, միութեան և սիրոյ ոչ ևս է ի կեանս։

Աղաչեսցուք բոլորով սրտիս զԱստուած, կենդանեաց և մեռելոց, զի պարգևեսցէ զարժանաւոր յաջորդ Նորին ի փառս և ի պատիւ Հայրապետութեան, ի շինութիւն և ի պայծառութիւն ս. եկեղեցւոյ և ի մխիթարութիւն համօրէն հոգևորականութեան և ժողովրդեան ազգին մերոյ սիրելւոյ։

Մաղթելով երկար կեանս Ձեզ, բարեջան անդամոց Սինոդի և միաբանութեանդ,

Մնամ աղօթարար

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻԱՑ.

Ի 27-ն Նոյեմբերի 1907 ամի
և ըստ տոմարիս ՌՑԾԼ
ի Հայրապետութեան Մերում Ն. ամի
յԱթոռ Կիլիկեան, ի Սիս
Թիւ 165.

Երուսաղեմի Ամենապատիւ Ս. Պատրիարքն ևս Տ. Ցարութիւն արքեպիսկոպոս մի թղթով յանուն Տ. Տեղակալի ցաւակցութիւն է յայտնում Ն. Ամենապատուութեան և միաբանութեանս Ս. Հայրապետի մահուան առթիւ, յիշելով հանգուցեալ Կաթուղիկոսի հետ ունեցած իւր մտերմական բարեկամութիւնը։ Ապա շնորհաւորում է Ն. Ամենապատուութեան տեղակալական պաշտօնը և բարեմաղթում կարողութիւն և զօրութիւն մաքուր խղճով և բարեզք արդիւնաւորութեամբ կատարելու այն։